Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

11.05.2022թ. ք.Արմավիր

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արագածոտնի և Արմավիրի մարզային բաժնի Արմավիրի-Բաղրամյանի տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Ն. Թևոսյանս ուսումնասիրելով թիվ 07433629 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «28» սեպտեմբեր 2021թ. տրված թիվ ԱՐԴ/1087/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Դիանա Արթուրի Սահակյան-ից հօգուտ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 2099300 ՀՀ դրամ:

Բռնագանձումը տարածելով գրավադրված ոսկյա իրերի վրա:

Կատարողական գործողությունների ընթացքում գույքագրվել և վերցվել է արգելանքի պարտապան՝ Դիանա Արթուրի Սահակյանին պատկանող 0000413258 գրավի պայմանագրերով գրավադրված ոսկյա զարդերը և ստացվել է փորձագետ՝ Ա/Ձ Գևորգ Տիգրանի Հովհաննիսյանի կողմից գրավոր եզրակացությունը նշված գույքի շուկայական արժեքի վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28,28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Դիանա Արթուրի Սահակյանին, պատկանող ներքոհիշյալ գույքը

h/h	լոտի անվանումը, նկարագիրը	միավորի գնահատված գինը	միավորի մեկնարկային գինը	գույքը քանակը
1	Ոսկյա շղթա 550 հարգի 30.0 գրամ	495.000 դրամ	371.250 դրամ	1հատ
2	Ոսկյա շղթա 550 հարգի 30.0 գրամ	495.000 դրամ	371.250 դրամ	1հատ
3	Ոսկյա շղթա 583 հարգի 15.0 գրամ	262.500 դրամ	196.875 դրամ	1հատ
4	Ոսկյա շղթա 583 հարգի 7.5 գրամ	131.200 դրամ	98.400 դրամ	1հատ
5	Ոսկյա շղթա 583 հարգի 5.7 գրամ	99.700 դրամ	74.775 դրամ	1հատ
6	Ոսկյա շղթա 550 հարգի 6.2 գրամ	102.300 դրամ	76.725 դրամ	1հատ
7	Ոսկյա շղթա 500 հարգի 7.9 գրամ	118.500 դրամ	88.875 դրամ	1հատ
8	Պողպատից կախազարդ 583 հարգի 5.5 գրամ	96.200 դրամ	72.150 դրամ	1հատ
9	Պողպատից կախազարդ 583 հարգի 2.4 գրամ	42.000 դրամ	31.500 դրամ	1հատ
10	Պողպատից կախազարդ 550 հարգի 0.2 գրամ	96.200 դրամ	72.150 դրամ	1հատ

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային

կայքի՝harkadir.achurd.am միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 20.06.2022թ:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

« Դատական ակտերի հարկադիր կատարման մասին » ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողություններ

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելումն չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք: «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ ***Ն. ԹԵՎՈՍՅԱՆ***